

## ՀՀ ֆինանսների նախարարություն

### Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 19/6

30 սեպտեմբերի 2014 թ.

Քննարկվեց Սանդրիկ Ղարազյոզյանի 13.08.2014 թ-ի դիմումով բերված գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Իջևանի ՏՀՏ պետի 07.04.2014 թ-ի թիվ 88 որոշման դեմ:

#### **Սանդրիկ Ղարազյոզյանի գանգատում բերված փաստարկները.**

2014 թ-ի ապրիլի 7-ի ՀՀ ԿԱ ՊԵԿ Իջևանի ՏՀՏ պետի կայացրած թիվ 88 որոշումն ոչ իրավաչափ վարչական ակտ է հետևյալ պատճառաբանությամբ:

1. Նախ, որոշման մեջ չի գրվել բոլոր ռեկվիզիտները՝ վկայականի համարը, ծննդյան թիվը, ամիսը, ամսաթիվը, անձնագրային տվյալները, հասցեն չի գրվել ամբողջությամբ:

2. 1999 թ-ի հունվարից հետո մինչև այսօր հարկային տեսչություն երբեք չի ներկայացվել «հաստատագրված վճարների հաշվարկման համար ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարություններ», սակայն թիվ 88 որոշման մեջ նշված է, որ նշված հայտարարությունները ներկայացվել են 01.01.1999 թ-ից մինչև 2007 թ-ի հունիսն ընկած ժամանակահատվածի համար, ինչը չի համապատասխանում իրականությանը: Գանգատաբերը Իջևանի տարածքային հարկային տեսչությունից պահանջել է ցույց տալ այդ հայտարարությունները, սակայն իրեն պատասխանել են, որ դա հնարավոր չէ, քանի որ չկա որևէ արխիվ:

3. Պետական ռեգիստրի Նոյեմբերյանի տարածքային բաժինը 2006 թ-ի օգոստոսի 8-ին դադարեցրել է /լուծարել է/ Սանդրիկ Ղարազյոզյանի անհատ ձեռնարկատիրոջ գործունեությունը հիմք ընդունելով Նոյեմբերյանի հարկային տեսչության կողմից ներկայացված /1996–2001թթ. գրանցված/ 12.03.2005 թ-ի թիվ ՀՕ-215-Ն օրենքի ուժով լուծարվող թիվ 2 ցուցակը: Սանդրիկ Ղարազյոզյանի անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարեցնելը /լուծարելը/ գրանցամատյանում գրանցված է 460 համարի տակ: Հետևապես, ինչպես կարող է անհատ ձեռնարկատիրոջ գործունեությունը 2006 թ-ի օգոստոսի 8-ին դադարեցվելու դեպքում մինչև 2007 թ-ի հունիս ամիսն ընկած ժամանակահատվածի համար պարտավորություններ առաջանալ:

4. Համաձայն 12.03.2005թ թ-ի «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների արտոնություններ սահմանելու մասին» թիվ ՀՕ-215-Ն օրենքի 1-ին հոդվածի, ինչպես նաև ՀՀ ԿԱ ՀՊԾ պետի 2005 թ-ի դեկտեմբերի 13-ի թիվ 1-06/602-Ա հրամանի 3-րդ կետի ա/ ենթակետի դրույթների անհատ ձեռնարկատիրոջ գործունեությունը լուծարելու ժամանակ՝ 2006 թ-ի օգոստոսի 8-ին, հարկային պարտավորություն առկա չի եղել:

5. 2014 թ-ի ապրիլի 7-ին կայացրած թիվ 88 որոշման 5-րդ կետում սխալ է նշված է, նշված որոշումը բողոքարկելու ժամկետը:

6. 2014 թ-ի ապրիլի 7-ին կայացրած թիվ 88 որոշման մեջ նշված է. «Սանդրիկ Հրանտի Ղարազյոզյանը 03.04.2014 թ-ին լուծարել է պետական ռեգիստրի գրանցման վկայականը և պարտքերը գոյացել են մինչ այդ ձեռնարկատիրությամբ զբաղվելու տարիներին»: Նշվածը չի համապատասխանում իրականությանը, քանի որ պետական ռեգիստրի գրանցման վկայականը լուծարվել է 08.08.2006 թ-ին:

Այսպիսով, ՀՀ ԿԱ ՊԵԿ Իջևանի տարածքային հարկային տեսչության 2014 թ-ի ապրիլի 7-ին կայացրած թիվ 88 որոշումը, որով Սանդրիկ Ղարազյոզյանի վրա դրվել է



ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն, ընդունվել է բացահայտ կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա:

Հաշվի առնելով վերը նշվածը և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի դրույթներով Սանդրիկ Ղարազյոզյանը խնդրում է 2014 թ-ի ապրիլի 7-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ Իջևանի տարածքային հարկային տեսչության պետի կայացրած թիվ 88 որոշումը ճանաչել անվավեր:

**ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Իջևանի ՏՀՏ պետը, քննարկելով անհատ ձեռնարկատեր Սանդրիկ Հրանտի Ղարազյոզյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 03.04.2014 թ-ի դրությամբ Սանդրիկ Հրանտի Ղարազյոզյանի չկատարած հարկային պարտավորությունների չափը կազմում է 937.749 դրամ: Արդյունքում, ՀՀ ԿԱ ՊԵԿ Իջևանի ՏՀՏ պետի կողմից 2014 թ-ի ապրիլի 7-ին կայացվել է թիվ 88 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Սանդրիկ Հրանտի Ղարազյոզյանից 937.749 դրամ գանձելու վերաբերյալ: Որոշման համաձայն, վերոգրյալ պարտքն առաջացել է 01.01.1999 թ-ից մինչև 2007 թ-ի հունիսն ընկած ժամանակահատվածում հաստատագրված վճարների հաշվարկման համար ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հարկատուի ներկայացրած հայտարարությունների հիման վրա:

Գործում առկա նյութերի և ապացույցների ուսումնասիրությամբ պարզվեց, որ, ըստ էության, Որոշման մեջ արտացոլված տվյալներն ու տեղեկությունները չեն համապատասխանում իրականությանը: Այսպես, Որոշման համաձայն պարտքն առաջացել է 01.01.1999 թ-ից մինչև 2007 թ-ի հունիսն ընկած ժամանակահատվածում հաստատագրված վճարների հաշվարկման համար ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հարկատուի ներկայացրած հայտարարությունների հիման վրա: Սակայն, ՀՀ ԱՆ պետական ռեգիստրի կողմից 17.04.2014 թ-ին տրամադրված անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարեցման մասին տեղեկանքի համաձայն Սանդրիկ Հրանտի Ղարազյոզյանի գործունեությունը դադարեցվել է 08.08.2006 թ-ին: Հաշվի առնելով նշված հանգամանքը, ինչպես նաև այն, որ սույն գործում առկա չեն ապացույցներ Սանդրիկ Հրանտի Ղարազյոզյանի կողմից 08.08.2006 թ-ից մինչև 2007 թ-ի հունիս ամիսն ընկած ժամանակահատվածում ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ հայտարարություններ ներկայացված լինելու վերաբերյալ, հետևապես հաստատագրված վճարների գծով առաջադրված պարտավորությունները, ըստ էության, հիմնավոր չեն:

Բացի այդ, Որոշման համաձայն 03.04.2014 թ-ի դրությամբ Սանդրիկ Հրանտի Ղարազյոզյանի չկատարած հարկային պարտավորությունների չափը կազմում է 937.749 դրամ, որը նույնպես հիմնավոր չէ, քանի որ «Հարկատու 3» համակարգում առկա տվյալների համաձայն 03.04.2014 թ-ի դրությամբ Սանդրիկ Հրանտի Ղարազյոզյանի չկատարած հարկային պարտավորությունների չափը կազմում է ոչ թե 937.749 դրամ, այլ՝ 105.000 դրամ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի համաձայն վարչական ակտն իր բովանդակությամբ պետք է համապատասխանի դրա ընդունման համար օրենքով սահմանված պահանջներին, նշում



պարունակի այն բոլոր էական փաստական և իրավաբանական հանգամանքների վերաբերյալ, որոնք վարչական մարմինն հիմք են տվել ընդունելու համապատասխան որոշում:

Իր հերթին, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն գրավոր կամ գրավոր հաստատված վարչական ակտը պետք է պարունակի հիմնավորում, որում պետք է նշվեն համապատասխան որոշում ընդունելու բոլոր էական փաստական և իրավական հիմքերը:

Վերոգրյալից հետևում է, որ Որոշումը կազմվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի, 57-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտմամբ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի, անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

### **ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝**

1. Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ Իջևանի ՏՀՏ պետի 07.04.2014 թ-ի թիվ 88 որոշումը:

2. ՀՀ ՖՆ Իջևանի տարածքային հարկային տեսչությանը.

Կատարել Սանդրիկ Հրանտի Ղարազյոզյանի պարտավորությունների հաշվարկ հիմք ընդունելով թղթային եղանակով վարվող անձնական հաշվի քարտում և հարկային գործում առկա տվյալները:

**Հանձնաժողովի նախագահի ժ/պ՝**



**ԲԵՆՈՒՄԵՆ**

